Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ««Նորատուս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Գրականություն

Թեմա՝ ՝ «Միջառարկայական կապերի հաստատումը դասավանդման գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Մուխսիկարոյան

Ուսուցիչ՝ Աննա Թովմասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Ի՞նչ է միջառարկայական կապը---------- 7

Միջառարկայական կապերի դրսևորումը գրականության ուսուցման Գործընթացում----------7

Միջառարկայնության սկզբունքի կապը ուսուցման այլ սկզբունքների հետ---------- 14

Ուսուցչի և աշակերտի գործունեության բովանդակությունը և տեղը միջառարկայնության սկզբունքի հիման վրա կառուցված դիդակտիկական համակարգում ----------14

Միջառարկայական կապերը որպես ինտեգրացված դասընթացների ուսուցման արդյունավետության միջոց---------- 15

Գործնական համատեքստ---------- 17

Եզրակացություն---------- 23

Օգտագործված գրականություն ----------25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառուցողական մեթոդներով աշխատելիս, խուսափելով միօրինականությունից՝ ուսուցիչը հաճախ գրականության դասին օգտագործում է միջառարկայական կապը՝ խրախուսելով աշակերտների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը, նրանց մտածողությունն ուղղորդելով դեպի նյութի դասակարգումը, վերլուծությունը, կանխատեսումը, հիմնավորումը, առարկումը, ամփոփումը, աստիճանակարգումը, համեմատությունը, զուգորդումը և այլն։

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր պետության համար կրթության զարգացումը տնտեսության առաջընթացի և տնտեսական զարգացման արդյունավետ քաղաքականության մշակման և իրագործման հիմնական երաշխիքն է։ Այդ է պատճառը, որ տարիներ ի վեր մեր երկրում իրականացվող կրթական բարեփոխումները միտված են ինչպես կրթության որակի, այնպես էլ ուսուցման արդյունավետության բարձրացմանը, ինչին հասնելու ուղիներից մեկն ուսումնական դասընթացում միջառարկայական կապերի անմիջական կիրառումն է։ Այս համատեքստում սույն աշխատանքը նվիրված է գրականության դպրոցական դասընթացում հնարավոր միջառարկայական կապերի կատարելագործմանն ու զարգացմանը։ Ստորև նախ հակիրճ կներկայացնենք միջառարկայական կապերի էության ու կարևորության մասին, որից հետո կառանձնացնենք գրականության դպրոցական դասընթացի առանձին բաժիններ և կոնկրետ օրինակներ, որոնք, մեր պատկերացմամբ, կարող են լավագույնս ի ցույց դնել միջառարկայական կապերի օգտակարությունն ու արդյունավետ կիրառությունը դպրոցական դասընթացում։

Որքան էլ զարմանալի ու հետաքրքիր լինի, այնուամենայնիվ փաստ է, որ մեզ շրջապատող աշխարհում գիտությունը, տեխնիկան և տեխնոլոգիաները վերջին մեկ-երկու տասնամյակներում զգալի զարգացում են ապրում՝ շնորհիվ միջգիտական կապերի սերտացման ու ամրապնդման, սակայն այդ նույն ժամանակահատվածում մեր երկրում նկատվում է դպրոցներում հումանիտար առարկաների նկատմամբ

սովորողների հետաքրքրությունների նվազում, ինչը հատկապես սովորողների կողմից մեկնաբանվում է այն թյուր պնդմամբ և «արդարացմամբ», թե հումանիտար առարկաների իմացությունն ապագայում նրանց պետք չէ, և այդ առարկաները բարդ են ու դժվար ընկալելի։ Կարծում ենք՝ այսպիսի սին պատկերացումների ձևավորման հիմնական պատճառներից մեկը դպրոցական դասընթացում միջառարկայական կապերի թույլ արտացոլումն է, ինչը հնարավորություն չի ստեղծում սովորողների մոտ ձևավորել այն պարզ ընկալումը, որ ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների դարաշրջանում հումանիտար առարկաները, հատկապես հայոց լեզուն ու գրականությունը, այն առանցքային և հիմնարար գիտություններն են, որոնց տարրական մակարդակի տիրապետումն անհրաժեշտ է յուրաքանչյուր մարդու՝ անկախ նրա ընտրած մասնագիտությունից։

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական յուրաքանչյուր խնդրի լուծում ենթադրում է միջգիտական կապերի սերտացում և ինտեգրում, իսկ գիտական տարբեր ճյուղերի հիմունքներին ծանոթացումը և դրանց միջոցով մարդու աշխարհայացքի ու մտահորիզոնի ընդլայնումը սկսվում է հենց դպրոցից։ Ուստի, նախ և առաջ դպրոցում, ուսումնական ծրագրերը պետք է կազմված լինի այնպես, որ ուսումնական գործընթացում սովորողները մշտապես գտնվեն միջառարկայական կապերի գործածության կենտրոնում, միևնույն երևույթներին և խնդիրներին ծանոթանան տարբեր ուսումնական առարկաների տեսանկյունից, բազմակողմանիորեն և տարբեր մեկնաբանություններով։

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է։ Հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար։ Այսպիսի դասավանդման տեխնիկան նպաստում է աշակերտների տարբեր հմտությունների, կարողությունների ընդլայմանն ու

ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Զարգացնում է բազմաբնույթ մտածողությունը և ճիշտ գործելու, սովորելու ունակությունները:

Միջառարկայական կապերի շնորհիվ առավել մատչելի ու դյուրին է դառնում նոր նյութը: Դրանց իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Գործադրվող մեթոդները պետք է նպաստեն ինքնակրթության կարողությունների ձևավորմանը: Ուսումնական մեթոդների համակարգում պետք է հստակորեն արտացոլվի ուսուցչի և աշակերտների գործունեության փոխադարձ կապը: Պետք է օգտագործվեն ուսուցման մեթոդների ոչ միայն ուսուցողական, այլև զարգացնող և դաստիարակող ֆունկցիաները: Միջառարկայական կապերի իրագործման արդյունքում կազմավորվում է գիտելիքները մի ընդհանուր համակարգում ընդգրկելու, հիշողության մեջ ամբողջական կայուն գոյացություն ձևավորելու կարողություն:

Հետազոտության նպատակը՝ ցույց տալ, որ միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է գիտելիքների ձևավորմանն ու համակարգմանը, անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, անձի զարգացմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա: Միջառարկայական կապերի ստեղծման միջոցով աշակերտների մոտ կզարգանան քննադատական և ստեղծագործական կարողությունները: Կդրսևորեն ճանաչողական, վերացարկման, մտահանգման, դիտարկման, երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում, կհամագործակցեն ընկերների հետ, կլսեն խոսակցին, կաշխատեն ընդհանուր նյութերով, կզարգացնեն գեղագիտական ճաշակ:

Հետազոտության խնդիրներն են՝

- տեսական ու գործնական ի՞նչ մոտեցումներ են առկա թեմայի վերաբերյալ
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ,ամրապնդել և կիրառել

- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով անցածի ու անցնելիքի միջև տրամաբանական կապեր ստեղծել
- ինչպե՞ս միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով զարգացնել քննադատական և ստեղծագործական կարողություններ:

1.1. Ի՞ՆՉ Է ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ

Միջառարկայական կապը միավորված (ինտեգրված) ուսումնական ծրագրերի տեսակներից է: Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա: Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ գործոն է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար: Այս մոտեցման հիմնական վճռորոշ գործոնն այն է, որ ուսումնական առարկաները տարանջատված չեն միմյանցից, այլ սերտորեն փոխկապակցված են թեմայով, առանցքով:

1.2. ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԿԱ-ՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Միջառարկայական կապերը լավագույնս նպաստում են.

- սովորողների մոտիվացիայի բարձրացմանը,
- ուսուցանվող թեմայի առավել խոր ուսումնասիրմանը,
- տեսական գիտելիքների գործնական ամրապնդմանը,
- ուսումնական գործընթացում տրամաբանորեն փոխկապակցված գործողություններով (համեմատում, ընդհանրացում, համադրում, զուգորդում, վերլուծում և այլն) սովորողների նպատակաուղղված աշխատանքի կազմակերպմանը,
- սովորողների հետաքրքրության առաջացմանը:

Կարևորելով միջառարկայական կապերի դերը ուսուցման պրոցեսում՝ Յան Ամոս Կոմենսկին «Մեծ դիդակտիկա» աշխատությունում շատ դիպուկ նշում է՝ «առվակները» պետք է միաձուլվեն միմյանց մեջ և հոսեն դեպի «գետը»՝ նկատի ունենալով, որ

միևնույն խնդրի, պրոբլեմի վերաբերյալ տարբեր առարկայական, գիտական պատկերացումները՝ «առվակները», պետք է փոխլրացնեն միմյանց և միախառնվելով, հոսեն՝ դեպի իմացության «գետը»:[1]

Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է ստեղծում խնայելու ժամանակը, սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծելու նպաստավոր պայմաններ:

Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը, և դրանց կապը՝ կյանքի հետ: Գրականության ուսուցիչը, այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցելով, միջառարկայական կապերի միջոցով իրականացնում է ուսումնադաստիարակչական խնդիրների ամբողջական լուծում:

Ուսուցիչները դժվարություններ են ունենում միջառարկայական կապերը գործնականում կիրառելու ժամանակ: Հիմնական պատճառը կոնկրետ թեմաներում միջառարկայական կապերի իրագործմանն ուղղված բավարար մեթոդական նյութերի բացակայությունն է, ինչպես նաև ուսուցիչների՝ միասին աշխատելու, համագործակցելու թույլ կարողությունը: Սակայն ժամանակակից ուսուցիչը գրականությունից միջառարկայական կապեր իրագործելիս պետք է կարողանա ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Դրա համար նա պետք է տիրապետի տեսական հարցերին և խելամիտ օգտագործի մեթոդական նյութերը, տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ գտնելով գրականության ուսուցման ժամանակ միջառարկայական կապերի իրագործման նոր ձևեր և ուղիներ՝ հաշվի առնելով առարկայական ծրագրերն ու չափորոշիչները:

Ուսուցման պրոցեսում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված՝ նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել տվյալ դասարանը, նրա

[1] *Վ. Խ. Հարությունյան, Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970, 293 էջ:*

առանձին խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժառիթները և հետաքրքրությունները: Դասապրոցեսի կազմակերպման բնույթը աշակերտներին մղում է ակտիվորեն արտահայտվելու, բանավիճելու, իրենց մտքերը շաղկապված, պատկերավոր, համոզիչ և հիմնավորված շարադրելու: Ուսումնական նյութի շարադրման կամ սովորողների հիշողության մեջ հենակետային գիտելիքների վերականգնման ժամանակ օգտագործվում են հարակից դասընթացներում սովորած փաստեր, հասկացություններ, օրենքներ:

Միջառարկայական կապերի իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Գործադրվող մեթոդները պետք է նպաստեն ինքնակրթության կարողությունների ձևավորմանը: Ուսումնական մեթոդների համակարգում պետք է հստակորեն արտացոլվի ուսուցչի և աշակերտների գործունեության փոխադարձ կապը: Պետք է օգտագործվեն ուսուցման մեթոդների ոչ միայն ուսուցողական, այլև զարգացնող և դաստիարակող գործառույթները:

Միջառարկայական կապերի իրագործման արդյունքում կազմավորվում է գիտելիքները մի ընդհանուր համակարգում ընդգրկելու, հիշողության մեջ ամբողջական կայուն գոյացություն ձևավորելու կարողություն: Դրա համար օգտագործվում են ամփոփիչ աղյուսակներ և ընդհանրացման այլ ձևեր:

Միջառարկայական կապերը արտացոլվում են տնային առաջադրանքներում ևս: Դրանք նպատակաուղղվում են աշակերտների կողմից երևույթների բացահայտման և ուսումնասիրությունների արդյունքների կամ հայտնաբերված օրինաչափությունների օգտագործման նկատմամբ համալիր մոտեցման գիտակցմանը: Աշակերտներին ծանոթացնելով ֆիզիկայի, քիմիայի, գրականության և այլ գիտությունների օրենքներին՝ ուսուցիչները ցույց են տալիս, թե այդ օրենքներն ինչպես են օգտագործվում զանազան ավտոմատ սարքավորումներում, տեխնոլոգիական պրոցեսներում:

Միաժամանակ նշվում է ուսնասիրվելիք օբյեկտների և պրոցեսների լայն օգտագործումը կենցաղում և դրանց ունիվերսալ բնույթը: Օրինակ՝ Վահան Տերյանի «գարուն« բանաստեղծությունում, ուր նա նկարագրում է երեկոյան ծաղիկների փակվելը, ուսուցիչը կարող է միջառարկայական կապ հաստատել բուսաբանության հետ, բացատրի թե ինչն է պատճառը, որ երեկոյան ծաղիկները փակվում են կամ թռչնի ձվի կառուցվածքն ուսումնասիրելիս կարող է անդրադառնալ նրա ձևին՝ ձվաձևությանը, բացատրի, թե ինչ նշանակություն ունեն ձվի կորությունները, և թե ինչու այն չի կոտրվում թխսի ծանրության տակ: Նույն կերպ բացատրվում է ճարտարապետական տարբեր կառույցների կամարաձև կորությունների դերը նրանց ամրության գործում: Միջառարկայական կապերի օգտագործումը դիտվում է որպես արտադասարանական աշխատանքների կրթական և դաստիարակչական նշանակության բարձրացման օպտիմալ միջոց: Արտադասարանական աշխատանքներում լայնորեն օգտագործվում են հարակից առարկաներում ուսումնասիրվող փաստերը, հասկացությունները, օրինաչափությունները: Կարելի է առանձնացնել միջառարկայական կապերի իրագործման ձևերից հետևյալները՝ տնային հանձնարարություն այլ առարկաներից, միջառարկայական բնույթի խնդիրների լուծում, գործնական աշխատանքների իրականացում, միջառարկայական կապերի իրագործում արտադասարանային պարապմունքների ժամանակ (խմբակներ, վիկտորինաներ, ՈՒՀԱ, թեմատիկ երեկոներ և այլն), միջառարկայական բովանդակությամբ միջոցառումներ (կոնֆերանս, բանավեճ, համադպրոցական երեկո, օլիմպիադա և այլն), որոնք, որպես կանոն, կարող է կազմակերպել և անցկացնել կենսաբանության ուսուցիչը այլ առարկաների ուսուցիչների հետ միասին:

Անհրաժեշտ տեղեկատվության հավաքման և համակարգման ժամանակ պետք է հաշվի առնել, թե որտեղ կարելի է գտնել համապատասխան նյութը, հարակից առարկայում ե՞րբ է ուսումնասիրվում տվյալ նյութը, հարակից առարկայի նյութի համառոտ նկարագրությունը, ի՞նչ մեթոդ կամ հնար է նպատակահարմար կիրառել հարակից առարկայի նյութին անդրադառնալիս, հետագայում ո՞ր առարկայում կարող

է օգտագործվել գրականության տվյալ նյութը: Դասին ուսուցչի բարձր մակարդակով նախապատրաստվելու ցուցանիշերից մեկը դասանյութի համակողմանի վերլուծությունն է, որի ժամանակ աշակերտներին տնային առաջադրանքները տրվում են, պահանջելով՝ հենվելով մի առարկայից յուրացրած գիտելիքների վրա, բացատրել այն փաստերն ու երևույթները, որոնք ուսուցանվում են այլ դասընթացներում:

Միջառարկայական կապերով դասի գնահատման և վերլուծության համար կարելի է կիրառել հետևյալ չափանիշերը. [2]

1. ուսումնադաստիարակչական խնդիրների ձևակերպման մեջ միջառարկայական կապի առկայության արտացոլում,
2. դասին կիրառվող բովանդակային տեղեկատվական միջառարկայական կապերի տեսակները (այլ առարկաներից հետաքրքրող կոնկրետ փաստեր, հասկացություններ, օրենքներ, հարցեր),
3. միջառարկայական կապերի իրականացման մեթոդներ և հնարներ, դրանց համապատասխանությունը դասի ուսումնադաստիարակչական պահանջներին
4. միջառարկայական կապերի իրագործման ժամանակ սովորողների ակտիվությունը, հետաքրքրություններն ու հաջողությունները,
5. գրականության ուսուցչի՝ այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցության ձևերն ու մեթոդները:

Սովորողների մոտ միջառարկայական կապերի կիրառմամբ յուրացված գիտելիքների և կարողությունների ստուգման և գնահատման արդյունավետ միջոց են միջառարկայական ստուգարքները: Միջառարկայական բնույթի խնդիրներ, ստուգարքներ, բանավոր հարցման հարցաշարեր, գործնական և լաբորատոր աշխատանքներ, տնային առաջադրանքներ և միջառարկայական կապերի իրագործման այլ ձևեր կարող է կազմակերպել յուրաքանչյուր ուսուցիչ՝ ներդնելով իր

[2] *Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001, 231 с.*

ստեղծագործական ներուժը։ Այսպիսով՝ միջառարկայական կապերի իրագործումն ապահովում է հանրակրթության առջև դրված բազմաթիվ խնդիրների լուծման, աշխարհի միասնական ընկալման, պրոբլեմների լուծման ընդհանրական մոտեցման հարցը։

Գաղտնիք չէ, որ դասավանդման և կրթական գործընթացը բարելավելու գործում առանցքային դերը պատկանում է ուսուցչին, որովհետև դասավանդման և դաստիարակության որակը կախված է նրա հմտությունից, նախաձեռնող, ստեղծագործ լինելու, դասավանդման լավագույն գործիքներն ու մեթոդները ընտրելու կարողությունից, և, ի վերջո, կրթության որակը չի կարող լինել ավելին, քան ուսուցչի որակն է։

Հայաստանի հանրակրթության վերջին տարիների բարեփոխումներում, դպրոցներում ներառական և ֆինանսական կրթության ներդրման, դրանց հետ կապված՝ հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի վերանայման արդի գործընթացում առանցքային տեղ են գրավում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության բարեփոխումները։ Միաժամանակ, դիտարկումները փաստում են, որ ուսուցիչ կերտող մանկավարժական բուհերում դասավանդման ավանդական մեթոդներն ու միօրինակ ձևերը, ինչպես նաև հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին բուհական կրթության բովանդակության համապատասխանեցումը այլևս բարեփոխումների համատեքստում են, քանի որ կրթական բարեփոխումների հաջողությունը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե որքան ներդաշնակ են փոփոխվում հանրակրթության և բուհական կրթության բովանդակության բաղադրիչները։

Անշուշտ, մեծ է ուսուցչի դերը սովորողների կրթության և մասնագիտական որակավորում ապահովելու գործընթացում, որի արդյունավետությունը պայմանավորված է այնպիսի պայմանների ապահովմամբ, որոնք կնպաստեն աշակերտների ստեղծագործական մտքի զարգացմանը և հմտությունների

ձևավորմանը: Անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր այնպիսի պայմաններ, որ ուսուցման գործընթացում աշակերտը հանդես գա ոչ թե որպես գիտելիքները պասիվորեն ընկալող, այլ դառնա դրանց ձեռք բերման գործընթացի ակտիվ մասնակից: Մասնավորապես, նոր թեմայի հաղորդումը կարելի է կազմակերպել սովորողների միջոցով՝ նրանց ակտիվ մասնակցությամբ, մտագրոհի և երկխոսության մեթոդով, աշակերտներին մղելով ինքնուրույն, ստեղծագործ աշխատանքի, նրանց համար ստեղծելով ազատ մտածելու և ստեղծագործելու հնարավորություններ:

Ըստ էության, ուսուցիչը պետք է հոգա ոչ այնքան հաղորդվող նյութի քանակի, որքան քննարկվող նյութի սկզբունքային հիմնահարցերը բացահայտելու մասին: Արդյունքում նման դասը կունենա զարգացնող նշանակություն, և աշակերտը յուրաքանչյուր այդպիսի դասից կքաղի որակապես նոր բան՝ հայացքների ընդլայնման և տեսակետների տարատեսակության առումով, այլապես կասկած չկա, որ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողություններից զուրկ աշակերտն այդ վիճակից ելք գտնելու համար ստիպված կլինի ողջ կյանքի ընթացքում կրել մտավոր անկարողության բեռը՝ մշտապես փնտրելով, թե ով իր փոխարեն կկատարի անհրաժեշտ, նույնիսկ ամենահասարակ մտավոր աշխատանքը:

Ցավոք, կան ուսուցիչներ, որոնք նոր նյութը հաղորդում են միալար, առանց ընդհատումների, առանց երկխոսության. մատուցում են այնպես, կարծես թե աշակերտն ունակ է մատուցվածը վայրկենապես ընկալելու, մինչդեռ իրականում նոր նյութի ընկալումն այնքան արագ չի կարող կատարվել, որքան մենք կուզեինք: Որպեսզի գիտելիքները ձևական չլինեն, դրանք պետք է մոտեցնել և համատեղել այն գիտելիքներին, որոնք աշակերտն արդեն ունի և կարողանում է կիրառել, դրանով իսկ՝ ապահովելով տեսականի և գործնականի սերտ միասնությունը և ուսուցման շարունակականության սկզբունքը:

1.3 ՄԻՋԱՌԱՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԱՊԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Հումանիտար առարկաների ուսուցման արդյունավետության բարելավման համար կարևոր է այդ առարկաների միջառարկայական և ներառարկայական կապերի զարգացումը և ինտեգրումը: Այդ կապերի ուսուցումը նպատակ է հետապնդում.

- Ընդլայնել կապերի գործնական, կիրառական ուղղվածությունը և դարձնել այն ավելի հետաքրքիր
- Ընդգրկել ինտեգրված դասապրոցեսում բնագիտական պատմական նյութեր
- Միջառարկայական և ներառարկայական կապերով զարգացնել գիտական լեզվատրամաբանական մտածողությունը և բնությունը ճանաչելու ունակությունները:
- Կազմել հումանիտար միջառարկայական կապերով թեստեր
- Դասապրոցեսնորում կազմակերպել փոքրիկ բանավեճեր «հայոց լեզուն և գրականությունը (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն), «Ես և տիեզերքը» բազմաբնույթ թեմաներով:
- Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծել «Նրանք ստեղծեցին գիտությունը» տեղեկատվական դաշտը:

1.4 ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աշակերտների մոտ տրամադրվածություն, ձգտում, հետաքրքրասիրություն առաջացնելու ճիշտ գործոններից մեկը իմ կարծիքով հանդիսանում է հուզական, զգայական, էմոցիոնալ տրամադրվածության ստեղծումը: Շնորհանդեսների,

գեղարվեստական խոսքի, երաժշտության, նկարչության կիրառումը դասերին օգնում է ավելի արդյունավետ դարձնել դասը, հասնել դասի գերագույն նպատակին՝ բազմակողմանի զարգացած անհատի ձևավորմանը:

Գրականության դասերը թողնում են զգացմունքային հետք աշակերտների հոգում, եթե ճիշտ է ընտրված դասի «արտասովոր» մուտքը, իսկ նյութերի ճիշտ օգտագործումը՝ «հրաշագործ» ներգործություն ունեցող գրական վերլուծությունները, հանդիսանում են որպես մուտքի «բանալի» դեպի «գրականության» գիտության հրաշքներով լեցուն գաղտնարաններ, ուր պետք է բացահայտվեն գրական գաղտնիքները և այն ծառայեցնեն մարդու նպատակներին, պահանջներին: Աշակերտների մեջ սերմանել «ցանկություն» հասկացությունը, ցանկություն ՝ սովորելու, սովորեցնելու, ստեղծագործելու:[3]

1.5 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում

[3] *Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. - Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար: Մանկավարժ հրատ.: Երևան 2005թ.*

միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»:

Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և, այսպես կոչված, ինտեգրացված դասերը: Այժմ էլ ինչպես բարձր դասարաններում, այնպես էլ արտադասարանական առարկայական խմբակների պարապմունքներում, կազմակերպվում են ինտեգրացված դասեր՝ նվիրված կոնկրետ որևէ տարողունակ-համալիր ընտրովի թեմայի ուսումնասիրմանը: Օրինակ՝ «Բնությունը և մարդը», «Ես և շրջակա աշխարհը», «Քիմիան և ֆիզիկան մեր շրջապատում» և այլ թեմաների համալիր ուսումնասիրումը հնարավոր է միայն միջառարկայական կապեր իրականացնող ինտեգրացված դասերին:

Սակայն քիմիայից, ֆիզիկայից, գրականությունից կամ այլ առարկաներից կազմակերպվող ինտեգրացված դասերը պիտի տարբերել միջառարկայական կապերը իրականացնող սովորական դասերից, որտեղ ուսումնասիրվում են ոչ թե ընտրովի թեմաներ /ինչպես ինտեգրացված դասերի ժամանակ է արվում/, այլ տվյալ առարկայի դպրոցական ծրագրային նյութերը:

Ինտեգրացված դասերը լավ է նկարագրել Ի. Պ. Պոդլասին, գրելով. «Ինտեգրացված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Որպեսզի սովորելու գործընթացը

հնարավոր լինի, պետք է փորձենք գրավել աշակերտների ուշադրությունը։ Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկաների հետ դասը ավելի հետաքրքիր, ինֆորմատիվ և արդյունավետ է դառնում։ Մտածողության զարգացումը զգալիորեն խթանվում է, երբ ուսուցումը կազմակերպվում է հուզական մթնոլորտում։ Դասի ժամանակ աշխույժ, բարձր տրամադրությունը առաջացնում է հոգեկան ուժերի վերելք, ակտիվ ճանաչողական գործունեություն, ձանձրույթն ու անտարբերությունը չեն ճնշում աշակերտին։ Որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն։

Միջառարկայական կապը ցանկացած առարկայի դեպքում շատ արդյունավետ է։ Եթե երեխան գիտակցում է, որ այս դասի սովորածը կարող է կիրառել նաև հաջորդ դասին, ավելի ուշադիր և հետաքրքրված է լսում և մասնակցում քննարկմանը, փորձում է ինքն էլ գտնել կապ առարկաների միջև, այսպես նաև ավելի լավ է պատկերացնում սովորածի կարևորությունը և կիրառությունը։ Ուղղորդող հարցերի միջոցով աշակերտներին մղում ենք ակտիվ մասնակցության; Ձևավորված աշխատանքային խմբերը ստանում են հանձնարարություններ։[4]

1.6. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ցույց տալու համար ուսումնասիրենք «Մեղեդի ծննդյան» տաղը։ Առաջարկում եմ ունենալ հետևյալ հետազոտական նյութը՝ Ռենեսանս (Վերածնունդ)՝ Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը» և «Սուրբ ընտանիքը», Լեոնարդո դա Վինչիի «Ջոկոնդա»-ն, Ս. Բոտիչելիի «Գարունը»։

Այլաբանական տաղերում Նարեկացու բերած կարևորագույն նորույթն ինքնըստինքյան առնչվում է «Վերածնունդ» հասկացությանը։

[4] *Максимова В. Н. Межпредметные связи в процессе обучения. – М.: Просвещение, 1989г. – 100 с.*

14-16-րդ դդ. Արևմտյան Եվրոպայի երկրներում տեղի ունեցան նշանակալի փոփոխություններ։ Սկսվեց գիտական հայտնագործությունների, գյուտերի, արվեստի հրաշալի ստեղծագործությունների հեղեղ։ Նոր գաղափարներ զարգացնող մարդիկ իրենց անվանեցին հումանիստներ, նրանք ոչ միայն ուսումնասիրում էին բնությունը, այլև ձգտում էին բնության և մարդու իրապաշտական պատկերմանը արվեստում։

Վերածննդի արվեստագետները գովերգում էին մարդու մարմնի գեղեցկությունը, մարդկային դեմքի ոգեշնչվածությունը։ Օրինակ՝ Իտալիայի նկարիչներ Ռաֆայելն ու Լեոնարդո դա Վինչին Տիրամայրեր պատկերելիս փառաբանում էին մայրության վեհությունն ու բերկրանքը, սովորական, իրենց ժամանակակից կանանց գեղեցկությունը։ Այդպիսի ստեղծագործությունները դադարում էին սրբապատկերներ լինելուց, թեև նկարվում էին եկեղեցու համար։

Իտալական Ռենեսանսի (Վերածնունդ) կտավներն ունեն կոմպոզիցիոն որոշ առանձնահատկություններ։ Ուշադիր դիտելով Ռաֆայելի «Սիքստինյան տիրամայրը» և «Սուրբ ընտանիքը» նկատում ենք, որ կերպարանքի հայացքներն ասես շրջան են կազմում։ «Սուրբ ընտանիք» - ում տիրամայրը նայում է Հովսեփին, Հովսեփը՝ մանկանը, իսկ նորելուկի աչքերը մտախոհ վեր են նայում։ Կոմպոզիցիոն երկրորդ առանձնահատկությունն այն է, որ կտավի գլխավոր ֆիգուրը տեղադրված է կենտրոնում, մյուս կերպարները դասավորված են այնպես, որ բոլորը միասին թողնում են կոնի տպավորություն։ «Սիքստինյան տիրամայրը» կտավի կենտրոնում տեղադրված է գլխավոր ֆիգուրը՝ Տիրամայրը, աջ կողմում՝ մի սուրբ, ձախում՝ Հռոմի պապը, կտավի ստորին մասում՝ հրեշտակները։ Միասին բոլոր կերպարները կազմում են կոն։ Սա արվում է նկարին տարածականություն և շարժում հաղորդելու նպատակով։ Ռենեսանսի կտավներում կոմպոզիցիան ծավալվում է տարածության մեջ։ Այդ կտավներում գերիշխում է աշխարհիկ կյանքը, տղամարդու ուժն ու կնոջ մարմնի գեղեցկությունը։

Վերածննդի դարաշրջանի կարևորագույն առանձնահատկությունը աշխարհիկ կյանքի փառաբանումն է։

Անդրադառնալով ուսումնասիրություն հիմնական նյութին՝ Գրիգոր Նարեկացու այլաբանական տաղերին, զուգահեռներ ենք անցկացնում, բարձրաձայնում նմանություններն ու տարբերությունները։

Նարեկացու հրաշալի տողերից մեկն էլ «Մեղեդի ծննդյան» - ն է, որը նվիրված է Փրկչի ծննդյանը և նրան ծնող Սուրբ Տիրամորը։ Նորից այլաբանական հրաշք մի պատկեր, երկպլանայնությունը կառուցվածքային ինքնատիպ մի հնարանք լինելուց զատ նաև բարձր գեղարվեստականություն է հաղորդում տաղին։ Աստվածային էությունը կրում է նաև մարդը՝ որպես բնության մասնիկ և Աստծո ստեղծած առավել բարդ ու հրաշակերտ արարած։ Այդպիսին են հատկապես սրբակենցաղ մարդիկ, սրբերը և առանձնապես Սուրբ Կույսը՝ Աստվածածինը, որն աշխարհ է բերել մարդկային կերպարանք առած Աստծո որդուն։ Ինչպես կերպարվեստում, այնպես էլ քնարերգության մեջ Տիրամայրը շատ հաճախ է փառաբանվել։ «Մեղեդի ծննդյանը» չքնաղ ձոն է՝ ուղղված Մարիամ Աստվածածնին։

Սակայն եթե մինչ Նարեկացին շարականներում Աստվածամայրը պատկերվում էր վերացականորեն, ապա Նարեկացու փառաբանած Տիրամայրը, իր մեջ անսահման երկնային լույս կրելով, միաժամանակ նաև այնքան երկրային է ու չքնաղ։

Ծավալվել են աչքերը ծով

Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ…

Վաղորդյան կապույտ երկնքի ֆոնի վրա կնոջ աչքերը ծով են հիշեցնում, որ ողողված են այգաբացի լույսով։ Եվ լույսն այնքան է առատ, որ «ծով աչքերը» փոխակերպվում են փայլակնաձև արեգակների, որոնք իրենք են շողարձակում «լուսացնցող այգաբաց» հիշեցնելով հեթանոս Վահագն աստծուն, որի «աչքերն էին արեգակներ»։ Կնոջ՝ թեթևակի շառագունած այտերը նման են դափնեվարդի և նռնենու ծաղկաթերթիկների, դաստակները՝ մանուշակի ծիրանի փնջի։ Աստիճանաբար մեր առջև հառնում է մահկանացու կինը, որն այնքան է շոշափելի ու իրական, որքան երկնային է ու վերացական Տիրամայրը։ Մենք տեսնում ենք հեզասահ, թեթևույն, հրաշագեղ ու նրբին քայլվածքով կնոջ։ Մեր առջև «գեղաշիտակ» հասակով մեկ

կանգնում է Նարեկացու երգած կինը։ Մենք լսում ենք կնոջ «ախորժալուր» գեղգեղանքը, քնքուշ, քաղցրանվագ ձայնը։ Շոշափելի է նրա գեղեցկությունը, իսկ երբ բանաստեղծը խոսում է կնոջ երգոլու մասին, պատկերը դառնում է կատարյալ, կարծես տեսնում ենք գիրգ թևերը կամար կապած, հանդարտ ու սեթևեթ ճեմող և երգող կնոջը։

Տաղն ընթերցելիս ոչ միայն տեսնում ենք Տիրամորը՝ լուսալիր այս հրաշք կնոջը, այլև լսում նրա երգը, զգում նրանից տարածվող ու չորսբոլորը ծփացող կնդրուկի բույրը։ Եվ մի պահ կարծես աչքերդ փակվում են նրա արդուզարդից ճառագվող փայլից, Թևերից ու ոտքերից ծնվող շողից։

Նարեկացու տաղերում արժևորվում է իրական աշխարհը՝ բնությունը, մարդը։ Ընթերցողը հրճվում է միջնադարի մեծ բանաստեղծի երգած բնության գույներով կամ բնության մի մասնիկը հանդիսացող կին էակի առինքնող գեղեցկությամբ։

«Մեղեդի ծննդյան» տաղը հիշեցնում է իտալական վերածննդի շրջանի նկարիչների գործերը։ Նարեկացին ստեղծում է մարմնականն գեղեցկության միանգամայն տեսանելի պատկերներ։

Ասես Ռաֆայելի վրձնած Տիրամոր մասին է ասված «աչքերը ծով» աչքերը «փայլակնաձև արեգակներ», «թևերը գիրգ»։

Այսպիսով՝ տասներորդ դարում Նարեկացին ստեղծեց կրոնական-այլաբանական այնպիսի տաղեր, որ երգեց նաև իրական աշխարհի գեղեցկությունները։ Դեռևս տասներորդ դարում նա հիմնադրեց հայ վերածննդի արվեստը, երբ համաշխարհային մշակույթի պատմության մեջ այնքան հայտնի իտալական վերածնունդը ձևավորվել է Նարեկացուց 300 տարի հետո միայն։

Երկրորդ օրինակում ներկայացնենք Մովսես Խորենացուն ու իր աշխատությունների կապը մյուս առարկաների հետ։

Ինչպես գիտենք Խորենացին չորրորդ դարի մտավոր ու քաղաքական գործիչ, թարգանիչ, վարդապետ, ճգնավոր, պատմահայր է։ Պատմահայր Մովսես Խորենացու կողմից ձեռագրված «Հայոց Պատմություն» մագաղաթյա ձեռագիր մատյաններն

ազգային ինքնաճանաչման հավաստի փաստաթղթեր են բոլոր դարաշրջանների սերունդների համար։

Կապեր ստեղծելով գրականության և մյուս առարկաների միջև՝ ուսումնասիրենք նրա «Հայոց պատմություն» աշխատությունը, որը ուղիղ կապ է հաստատում միջնադարյան հայոց պատմության հետ։ Ինչպես գիտենք, Մովսես Խորենացին այս աշխատությունը գրել է իշխան Սահակ Բագրատունու խնդրանքով։ Նա մանրակրկիտ նկարագրել է իր ժամանակներում տեղի ունեցած պատմական մեծ ու փոքր փոփոխությունները։ «Հայոց պատմություն» աշխատությունն ընդգրկում է Հայաստանի համար ամենակարևոր պատմական հեղաշրջումները՝ քրիստոնեությունը որպես կրոն ճանաչումը և հայ գրերի գյուտը։

Մովսես Խորենացու գրչին են վերագրվում նաև մի շարք աստվածաբանական աշխատություններ։ Նշանակալի է «Պատմութիւն Սրբուհւոյն Աստուածածնի և պատկերի նորա» երկասիրությունը ուր հեղինակը մանրամասն անդրադառնում է Մարիամ Աստվածածնի ազգաբանությանը, մեկնաբանում նրա կենսագրության առանձին դրվագներ, շարադրում նրա պատկերի պատմությունը, ներբողում Աստվածամորը։ Արժեքավոր է նաև «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» վարքագրական երկասիրությունը, որտեղ առկա են Ագաթանգեղոսի մոտ բացակայող՝ Հայաստանում քրիստոնեության տարածման առանձին մանրամասներ։ Այս աշխատություններով միջառարկայական կապ է ստեղծվում նաև գրականության և հայոց եկեղեցու պատմության միջև։

Պատմագրի անունով մեզ են հասել փիլիսոփա-դավանաբանական մի քանի երկասիրություններ՝ «Հարցմունք Հոբնաղի և պատասխանիք Մովսէսի Հայոց Քերթողի և Դավիթ Անյաղթ փիլիսոփայի», «Վիճումնական հարցաբանութիւն Մելիտոսի յունաց փիլիսոփային ընդ Աթէնականն Մովսէս փիլիսոփային Հայոց տրամաբանական ոճիւ» և այլն, որոնք փաստում է Խորենացու կապը փիլիսոփայության հետ։

Արժեքավոր է Մովսես Խորենացու հունարենից կատարված թարգմանություններ-ից՝ «Պատմութիւն վարուց Աղեքսանդրին» երկը։ Այդ թարգմանությամբ է

պայմանավորված հայ միջնադարյան քնարերգության յուրահատուկ տեսակներից մեկի՝ կաֆաների ժանրային ձևավորումը, ինչպես և մանրանկարչության մեջ աշխարհիկ թեմատիկայի սկզբնավորումը։ Մովսես Խորենացին թարգմանել է նաև Գրիգոր Նազիանզացու «Ճառերի» զգալի մասը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը հնարավորություն է տալիս հարակից առարկաներից ավելի վաղ ուսումնասիրած հասկացություններն ու օրենքները կիրառել տվյալ պահին ուսումնասիրվող առարկայի գիտելիքների համակարգում: Միջառարկայական բնույթի խնդիրների կազմումն ու լուծումը նպաստում են ճանաչողության գործընթացի ակտիվացմանը՝ խթանելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացումը: Առավել մոտ լինելով իրականությանը և բնական իրավիճակներին՝ դրանք նպաստում են տարբեր երևույթների ավելի բազմակողմանի և խորքային ընկալմանը, զարգացնում են սովորողների՝ բնագիտական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները: Այդ խնդիրները ոչ միայն հետաքրքիր են, այլև բացահայտում են սովորողների ստեղծագործական ներուժը, զարգացնում պատկերավոր մտածողությանը և նպաստում են նրանց գիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Նշված առավելություններով հանդերձ տարբեր առարկաների հատման տիրույթին վերաբերող միջառարկայական բնույթի խնդիրները դպրոցական խնդրագրքերում գրեթե բացակայում են, ուսուցիչները դրանց, որպես կանոն, ուշադրություն չեն դարձնում, իսկ սովորողները դժվարանում են լուծել այդպիսի խնդիրներ: Պատճառն այն է, որ միջառարկայական բնույթի խնդիրների լուծումը պահանջում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն հիմնական և հարակից առարկաներից, ինչպես նաև լուծման յուրահատուկ մեթոդների կիրառման կարողություններ և հմտություններ: Բնական է, որ ուսուցման որոշակի փուլում այդ գիտելիքները դեռևս կապված չեն միմյանց, ուստի դրանց համատեղ կիրառումն առաջացնում է որոշակի դժվարություններ:

Միջառարկայական կապերի ստեղծմանը շատ է նպաստում նաև ինտեգրված դասերի անցկացումը: Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և, այսպես կոչված, ինտեգրված դասերը:

Շատ թեմաներ կան, որոնց ուսումնասիրությունը պետք է ուղղակիորեն շաղկապված լինեն հարակից առարկաներից ձեռք բերված գիտելիքների հետ, դա վերաբերվում է ֆիզիկային և քիմիային, կենսաբանությանը և աշխարհագրությանը: Երբեմն ծրագրերի անհամապատասխանություն է ստեղծվում, որը բարդացնում է այդ աշխատանքը, բայց դա չի խանգարում, քանի որ եթե անգամ տվյալ նյութը մյուս առարկայից անցել են այլ դասարանում նրանց համար կլինի կրկնություն և գիտելիքի վերաարժևորում:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը:

Ինքս կարևորում եմ միջառարկայական կապերն ու նրա նշանակությունը հատակապես գրականության ուսուցման գործընթացում: Քանի որ հենց գրականությունն է որ շաղկապված է մյուս առարկաների հետ և մյուս առարկաներն են որ հիմնված են գրական ասպեկտների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վ. Խ. Հարությունյան, Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970, 293 էջ:
2. «Հանրակրթության պետական չափորոշիչ», «Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջներ», 2011, էջ 21:
3. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. - Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի աշակերտների համար: Մանկավարժ հրատ.: Երևան 2005թ.
4. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Եր., 2013, – 49 էջ:
5. Максимова В. Н. Межпредметные связи в процессе обучения. – М.: Просвещение, 1989г. – 100 с.
6. Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001, 231 с.